Արձանագրություն N 3

Երևան քաղաքի 12 վարչական շրջանների բակային և միջբակային ճանապարհների ու մայթերի ասֆալտ-բետոնյա ծածկի վերանորոգման աշխատանքների որակի տեխնիկական հսկողության ծառայությունների ձեռքբերման ԵՔ-ԲՄԾՁԲ-20/50 ծածկագրով գնման ընթացակարգի հանձնաժողովի նիստի

ք. Երևան 18.05.2020թ.
Ժամը՝ 11:10

Մասնակցում էին
Հանձնաժողովի նախագահ՝ Ա. Կիրակոսյան /ԳԱՊ/
Հանձնաժողովի անդամներ՝ Ռ. Աբրահամյան/գնահատող/, Ա. Սարգսյան / գնահատող /,
Կ. Հարությունյան /բացող/, Ռ. Գրիգորյան /բացող/
Հանձնաժողովի քարտուղար՝ Ա. Համբարձումյան

1. «ԵՔ-ԲՄԾՁԲ-20/50» ծածկագրով գնման ընթացակարգի ամփոփման մասին

(Ա. Կիրակոսյան)

1.1 Ընդունել ի գիտություն, որ 29.04.2020 թվականին «ԷՏԱԼՈՆ ԳՐՈՒՊ» ՓԲԸ-ին ներկայացվել էր ԵՔ-ԲՄԾՁԲ-20/50 ծածկագրով ընթացակարգի 1-12 չափաբաժինների մասով պայմանագիր կնքելու առաջարկ: Ընկերությունը պարտավոր էր պայմանագիր կնքելու մասին ծանուցումը և պայմանագրի նախագիծն ստանալուց հետո տաս աշխատանքային օրվա ընթացքում պատվիրատուին ներկայացնել հաստատված պայմանագիրը, որակավորման և պայմանագրի ապահովումները, որը Ընկերության կողմից չի տրամադրվել:

Ելնելով վերոգրյալից և հաշվի առնելով, որ Ընկերությունը համաձայն «Գնումների մասին» օրենքի 36-րդ հոդվածի 3-րդ մասի զրկվում է պայմանագիր կնքելու իրավունքից՝ գնահատող հանձնաժողովը որոշեց.

-ընթացակարգը 1-11-րդ չափաբաժինների մասով հայտարարել չկայացած.

-հաշվի առնլով, որ 12-րդ չափաբաժնի մասով հաջորդ տեղ զբաղեցրած մասնակցի՝ Վահրամ Կնյազյան Ա/Ձ-ի, կողմից ներկայացված գնային առաջարկը գերազանցում է նախատեսված ֆինանսական միջոցները՝ գնահատող հանձնաժողովը որոշեց անցկացնել գների նվազեցման բանակցություններ՝ համաձայն «Գնումների գործընթացի կազմակերպման մասին» ՀՀ կառավարության 526-Ն որոշմամբ հաստատված կարգի 40-րդ կետի 5-րդ ենթակետի:

1.2 Ելնելով երկրում առկա արտակարգ դրության պայմաններից և հաշվի առնելով, որ 12-րդ չափաբաժնի մասով բանակցությանը մասնակցում է միայն Վահրամ Կնյազյան Ա/Ձ-ն՝ գնահատող հանձնաժողովը որոշեց առաջարկել մասնակցին իր կողմից ներկայացվող նոր /նվազեցված/ գնային առաջարկը ներկայացնել էլեկտրոնային փոստի միջոցով /ani.hambardzumyan@yerevan.am/ մինչև 2020 թվականի մայիսի 21-ը ժամը 11:00-ն և որը պարտադիր պետք է հաստատված լինի էլեկտրոնային ստորագրությամբ:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 5, դեմ - 0:

Հանձնաժողովի
Նախագահ՝ ---------- Ա. Կիրակոսյան

Անդամներ՝ ---------- Ռ. Գրիգորյան

---------- Ա. Սարգսյան

---------- Կ. Հարությունյան

---------- Ռ. Աբրահամյան

Քարտուղար՝ ---------- Ա. Համբարձումյան